

Արձանագրություն №2/2014-2015

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2014թ. հոկտեմբերի 28-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 59-ը (հիսունինը):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Հաղորդում 2014-15 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին** (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
2. **ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
(Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
3. **Տեղեկատվություն 2013-14 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին:** (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
4. **Գիտական զեկուցում. <<Քրդական հարցը մերձավորարևելյան արդի զարգացումների համատեքստում>>** (Ձեկ.՝ միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ Վ.Ս. Պետրոսյան):
5. **Ընթացիկ հարցեր**

6.1 ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և նույն ֆակուլտետի կենսաբանության ինստիտուտի կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին
(զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)

6.2 Լյուդմիլա Հարությունյանին կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – Հաղորդում 2014-15 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց մի շարք տվյալներ, այդ թվում՝ առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների թիվն ըստ Երևանում գործող պետական բուհերի, առկա ուսուցմամբ ԵՊՀ բակալավրիատ ընդունված դիմորդների թիվը, տվյալներ /բանակ զորակոչվելու, վարձը մուծել-չմուծելու մասին/ 1-ին կուրս ընդունվածների մասին, հեռակա ուսուցմամբ ԵՊՀ բակալավրիատ դիմած և ընդունված դիմորդների թվի

մասին, ինչպես նաև համապատասխան տեղեկատվություն առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսերի վերաբերյալ:

Որոշեցին. – պրոռեկտոր Ա. Գրիգորյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին.** - **ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:** Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, ներկայացնելով կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները, մասնավորապես նշեց, որ ներկայացվում է կանոնակարգի 5-րդ խմբագրումը, որն արդյունք է համալսարանի մի շարք վարչական աշխատակիցների, դասախոսների և ուսանողների կողմից համատեղ փորձաքննության և փորձարկման: Վերախմբագրվել է հարցման թերթիկների հարցաշարը, ինչը փորձարկվել է հոգեբանության բաժնի ուսանողների շրջանում:

Արտահայտվեցին. – Ուսանողական խորհրդի նախագահ Ռ. Քարամյանը խնդրեց պարզաբանել կանոնակարգի նախագծի 4.2 կետում տեղ գտած դրույթն հարցման արդյունքների ամբիոնային քննարկումներում ուսանողական խորհրդի ներկայացուցչի մասնակցության վերաբերյալ: Ա. Գրիգորյանը նշեց, որ ամբիոնի վարիչը տեղյակ պահում նիստում տվյալ հարցի քննարկման մասին, իսկ ուսանողության ներկայացուցչի մասնակցությունը կամավոր է: Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանն առաջարկեց նախագծի 1.2 կետի ձևակերպումից հանել <<իրավունք>> բառը: Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ տվյալ ձևակերպումն օրենքի պահանջն է:

Որոշեցին. – ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը հաստատել նոր խմբագրությամբ:

3. **Լսեցին.** – **Տեղեկատվություն 2013-14 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին:** Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ըստ կրթական ծրագրերի ներկայացրեց 2013-14 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման արդյունքները:

Որոշեցին. – Հ. Ժամհարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** - **Գիտական զեկուցում. <<Քրդական հարցը մերձավորարևելյան արդի զարգացումների համատեքստում>>:** Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ Վահրամ Պետրոսյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ քրդական հարցի թեմատիկան շոշափող մի շարք խնդիրների, մասնավորապես. Թուրքիայում, Իրաքում, Սիրիայում, Իրանում և այլ պետություններում քրդերի ժողովրդագրական վիճակը, ներքրդական բաժանումներ ու ինքնության հարցեր, քրդական հարցի ներկա զարգացումներ:

Որոշեցին. – Վ. Պետրոսյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. – ընթացիկ հարցեր

5.1 լսեցին. - ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և նույն ֆակուլտետի կենսաբանության ինստիտուտի կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը նշեց, որ առաջարկվող փոփոխությունների հիմքում հետևյալ հանգամանքն է. ֆակուլտետի լաբորատորիաների կենտրոնացումը ինստիտուտի կազմի մեջ՝ երկու ստորաբաժանումների կանոնադրություններում այդ ստորաբաժանումների գիտական խորհուրդների թվակազմի փոփոխության անհրաժեշտություն է առաջ բերում :

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և նույն ֆակուլտետի կենսաբանության ինստիտուտի կանոնադրություններում առաջարկվող փոփոխությունները:

5.2 – լսեցին. - Լյուդմիլա Հարությունյանին կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը հակիրճ ներկայացրեց Լյուդմիլա Հարությունյանի վաստակը սոցիոլոգիա մասնագիտության՝ Հայաստանում կայացման ու զարգացման, ինչպես նաև ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման ու կայացման գործում՝ նշելով, որ Լ. Հարությունյանին կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելը նրա վաստակի արժանի գնահատական կհանդիսանա : Առարկություններ չհնչեցին :

Որոշեցին. – Լյուդմիլա Հարությունյանին շնորհել ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում :

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

29.10.2014թ.